

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԳԵՎՈՐԳ ՄԽԻԹԱՐԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ**

**«ՊԱՏԵՐԱԶՄ», «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ», «ՎԱԽ»  
ՀԱՍԿԱՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ**

Ժ.02.07 - «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսությամբ

**ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ ք.գ.դ., պրոֆեսոր Գ.Ռ. Գասպարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ք.գ.դ., դոցենտ Ն. Լ. Չարությունյան  
ք.գ.թ., պրոֆեսոր Ե. Ս. Մխիթարյան

Առաջատար կազմակերպություն՝ «Ինտերլինգվա» լեզվագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. նոյեմբերի 15-ին, ժամը 14:30-ին ՀՀ ԲՈՅ-ի՝ ԵՊՀ-ում գործող «Գերմանական լեզուներ» 009 մասնագիտական խորհրդի նիստում (0025, Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. հոկտեմբերի 14-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
ք.գ.դ., պրոֆեսոր՝

Ե. Լ. Երզնկյան

Վերջին տասնամյակների ընթացքում աշխարհում տեղի ունեցող հասարակական, գիտական, մշակութային, տեղեկատվական տեխնոլոգիաների և քաղաքական բուռն թափ ստացած զարգացումները անմիջականորեն մեծ ազդեցություն են թողնում քաղաքական գիտակցության ձևավորման վրա: Որպես բարդ հասարակական երևույթ՝ քաղաքական ոլորտը անմիջականորեն փոխկապակցված է լեզվի հետ: Անհնար է պատկերացնել որևէ քաղաքական ելույթ, ճառ, հրապարակային խոսք առանց լեզվի թե՛ տպագիր մամուլում, թե՛ հեռուստատեսությամբ, և թե՛ համացանցում: Ինչպես նշում է Ջ. Օրվելը, լեզուն մեծ ազդեցություն է ունենում քաղաքականության վրա, ինչն էլ հիմք է տալիս համոզվելու, որ քաղաքական լեզուն հենց քաղաքական իրականությունն է<sup>1</sup>:

Հրապարակային խոսքը և մամուլում տպագրված հոդվածները, ձևավորելով հասարակական և քաղաքական կարծիք, ըստ էության երկխոսություն են ժողովրդի հետ: Լսարանի կողմից հռետորին հասկանալ/չհասկանալը համարվում է ներքին երկխոսություն վերջինիս հետ:

Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է քաղաքական հաղորդակցման ճանաչողական և գործաբանական յուրահատկությունների բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությամբ, որը ժամանակակից հասարակության մեջ շատ կարևոր նշանակություն ունի: Թեման **արդիական** է նաև նրանով, որ քաղաքական խոսույթի և քաղաքական հաղորդակցման ուսումնասիրության շնորհիվ պարզաբանվում են անգլալեզու քաղաքական ելույթները և դրանց լրագրողական վերլուծությունները մամուլում, ինչն անկասկած նպաստում է ինչպես լեզվաբանական տեսությունների, այնպես էլ ժողովրդավարության արդյունավետ զարգացմանը:

Աշխատանքի գիտական **նորույթն** այն է, որ առաջին անգամ փորձ է կատարվում վերլուծել ամերիկյան քաղաքական հաղորդակցման լեզվամշակութային արժեքները և խոսքային փոխազդեցության տեսակների՝ հեղինակի հաղորդակցական և տեղեկատվական մտադրության, համոզման (պերսուազիայի), ուղղորդման, խոսքային մանիպուլյացիայի և հասցեատիրոջ սեփական կարծիքի ձևավորումը հռետորի և լրագրողի «օբյեկտիվ» տեղեկատվության միջոցով:

---

<sup>1</sup> Orwell G. Politics and the English Language. London, 1946.

Աշխատանքի **նպատակն** է քննության առնել ամերիկյան քաղաքական խոսույթի ճանաչողական և ոճագործաբանական առանձնահատկությունները քաղաքական հրապարակային ելույթներում ու վերջիններիս՝ մամուլում արժարժված հոդվածներում այն լեզվական միջոցների, որոնց շնորհիվ հռետորը և լրագրողը ներագդում են հասցեատիրոջ աշխարհի ճանաչողական պատկերի ձևավորման վրա:

Տվյալ նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ **խնդիրները՝**

1. հեղինակի հաղորդակցական և տեղեկատվական մտադրությունների բացահայտումը ամերիկյան քաղաքական խոսույթում,
2. մամուլում տպագրված քաղաքական ելույթների մեկնաբանությունը հաղորդակցական ոճաբանության տեսանկյունից,
3. լեզվական և արտալեզվական միջոցների վերլուծությունը քաղաքական ելույթներում և մամուլում,
4. քաղաքական հաղորդակցման մեջ գործածված հաղորդակցական ռազմավարության և մարտավարության նկարագրությունը,
5. հռետորների և լրագրողների «մանիպուլյացիոն» հնարների ուսումնասիրությունը քաղաքական խոսույթում,
6. քաղաքական հաղորդակցման լեզվամշակութային յուրահատկությունների շրջանակներում «խաղաղություն», «պատերազմ» և «վախ» հասկացությունների արտահայտման լեզվական առանձնահատկությունների պարզաբանումը, որոնք անմիջականորեն իրենց ազդեցությունն են ունենում լսարանի մտածելակերպի և հաղորդակցական վարքի վրա,
7. վերոնշյալ հասկացությունների ձևավորումը զանազան լեզվական արտահայտչամիջոցների շնորհիվ:

Չետագոտության **առարկան** է ԱՄՆ-ի նախագահներ Ջ. Բուշ Կրտսերի “To United Nations General Assembly” (November 10, 2001) և Բ. Օբամայի “Nobel Peace Prize Acceptance” (December 11, 2009) ելույթներում «պատերազմ», «խաղաղություն», «ահաբեկչություն» հասկացությունների ճանաչողական համակարգը, ինչպես նաև մամուլի և համացանցային զանազան կայքերի հոդվածների մեկնաբանությունները, որոնց արդյունքում ձևավորվում է «վախ» երևույթի ողջ հասկացական հարթությունը:

Ուսումնասիրության **մեթոդաբանական հիմք** են հանդիսացել հայ, ռուս և արտասահմանյան հեղինակների գիտական մտքի ձեռքբերումները: Աշխատանքում կիրառվել են խոսույթային, համատեքստային, հասկացութային, լեզվաոճական և նկարագրական վերլուծության **մեթոդները**:

Հետազոտության **տեսական արժեքն** այն է, որ ուսումնասիրության արդյունքները կարող են նպաստել քաղաքական խոսույթի և մասնավորապես դրա լեզվամշակութային յուրահատկությունների մեկնաբանման, տեքստի մեկնության ու վերլուծության, ինչպես նաև հասկացութաբանության զարգացմանը ճանաչողական լեզվաբանության և գործաբանական ոճագիտության հիմնախնդիրների հարստացման ոլորտում:

Հետազոտության **գործնական նշանակությունը** պայմանավորված է այն հանգամանքով, որ ստացված արդյունքները կարող են գործածվել լեզվաոճաբանության, ճանաչողական լեզվաբանության, խոսույթի վերլուծության, միջմշակութային հաղորդակցման տեսության վերաբերյալ դասախոսությունների և հատուկ դասընթացների ժամանակ: Վերոնշյալ առանձնահատկությունները կարող են նաև օգնել տարբեր քաղաքական գործիչներին, լրագրողներին, քաղաքական վերլուծաբաններին հրապարակային ելույթների ձևավորման և մեկնաբանման համար:

Ատենախոսության **կառուցվածքը** բխում է ուսումնասիրության նպատակից և խնդիրներից: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

**Ներածության** մեջ հիմնավորվում են ատենախոսության թեմայի արդիականությունն ու գիտական նորույթը, ներկայացվում նպատակներն ու խնդիրները, հետազոտության մեթոդները, տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլուխը («Աշխարհի ճանաչողական պատկերը քաղաքական հաղորդակցման տեսանկյունից») բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջին ենթագլխում («Քաղաքական խոսույթը խոսողական ակտերի տեսանկյունից») ներկայացվում է տեքստ և խոսույթ հասկացությունների լեզվաբանական տարբերությունը և սահմանումը, ըստ որի՝ խոսույթը վերաբերվում է խոսքին, իսկ տեքստը՝ լեզվի համակարգին:

Քննության է առնվում նաև քաղաքական խոսույթը՝ որպես խոսույթի տարատեսակ, և պարզ դառնում, որ վերջինիս գլխավոր գործառույթը համոզումն (պերսուազիան) է: Այս ենթագլխում հանգամանալից դիտարկվում են նաև խոսողական ակտերը, քանի որ վերջիններիս օգնությամբ է տեղի ունենում շփումը ունկնդրի և հաղորդակցվողի միջև: Քաղաքական խոսույթը, լինելով խոսողական ակտերի ամբողջություն, կատարում է հորդորելու, խորհուրդ տալու կամ համոզման հաղորդակցման գործառույթ:

Երկրորդ ենթագլխում (**«Քաղաքական հաղորդակցումը և զանգվածային լրատվությունը»**) հստակեցվում են քաղաքական հաղորդակցման գործառույթները պետություն-քաղաքացի հարաբերություններում, որտեղ շատ մեծ նշանակություն ունեն զանգվածային լրատվամիջոցները: Քաղաքական հաղորդակցումը ենթադրում է հաղորդակցող, հաղորդագրություն, փոխանակման ինչ-որ միջոց և վերջապես հասցեատեր: Քաղաքական հաղորդակցման իրագործման մեջ կարևորագույն գործիք են հանդիսանում ՁԼՄ-ները: Քաղաքացիները ձևավորում են իրենց կարծիքը քաղաքական գործչի այս կամ այն ելույթի վերաբերյալ մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և համացանցի միջոցով: Հետևաբար, շատ մեծ է զանգվածային լրատվության դերը ժամանակակից հասարակության մեջ, քանի որ մամուլում տպագրված ցանկացած քաղաքական հոդված ոչ միայն ներկայացնում է իրականությունը, այլև պարունակում է հոդվածագրի անհատական-գնահատողական մոտեցումը տվյալ քաղաքական իրադարձության շուրջ և տանում է մարդկանց կոնկրետ քայլերի:

Երրորդ ենթագլխում (**«Քաղաքական խոսույթը՝ որպես աշխարհի պատկերի արտացոլման միջոց»**) քննության են առնվում «հասկացույթ» ու «հասկացություն» եզրույթները, որոնց վերլուծության արդյունքում ձևավորվում է աշխարհի լեզվական պատկերը: Աշխարհի ճանաչողական պատկերը շատ կարևոր տեղ է զբաղեցնում քաղաքական հաղորդակցման մեջ, քանի որ անհնար է պատկերացնել որևէ քաղաքական գործչի ելույթ առանց ճանաչելու տվյալ երկրի մշակույթն ու աշխարհի լեզվական պատկերը: Գիտենալով իր երկրի քաղաքացիների ազգային մշակույթը, հոգեկերտվածքը և նրանց կողմից իրականության ընկալման առանձնահատկությունները՝ քաղաքական գործիչը սկսում է հաղորդակցվել վերջիններիս հետ՝ կիրառելով տվյալ հասարակությանը

քաջ հայտնի համոզման, հորդորի, հոգեբանական ազդեցության գործառույթները: Աշխարհի ճանաչողական պատկերը շատ է օգնում հռետորին և հողվածների հեղինակներին ճիշտ և տեղին կառուցելու իր շփումը ժողովրդի հետ՝ ներթափանցելով նրանց հոգեվիճակի մեջ:

Երկրորդ գլուխը («Պատերազմ» և «խաղաղություն» երևույթների հասկացական դաշտի ձևավորման առանձնահատկությունները ամերիկյան քաղաքական խոսույթում») բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջին ենթագլխում («Պատերազմ» և «խաղաղություն» հասկացությունների հարաբերակցությունը քաղաքական առաքելության տեսանկյունից») վերլուծության է ենթարկվում ԱՄՆ-ի ներկայիս նախագահ Բ. Օբամայի՝ 2009թ. նոբելյան մրցանակաբաշխության ժամանակ տեղի ունեցած ելույթը: Նախագահի ճառը բնորոշվում է տեքստի ճանաչողական հենքով և հանդես գալով միջնշակության խոսույթի համատեքստում՝ արտահայտում է ամերիկացու իսկությունը: Վերոնշյալ ելույթը հատկանշական է նրանով, որ այստեղ իրար են հակադրվում երկու տարբեր հասկացություններ՝ «խաղաղություն» և «պատերազմ», որոնք Բ. Օբաման դնում է մի հարթության վրա՝ դարձնելով դրանք իր խոսքի առանցքային թեման և միաժամանակ իր ճառին հաղորդելով հեղինակային գնահատականով արտահայտված հուզական երանգ:

**“Clear-eyed, we can understand that there will be war, and still strive for peace. We can do that -- for that is the story of human progress; that's the hope of all the world; and at this moment of challenge, that must be our work here on Earth.”**

Այստեղ կարելի է տեսնել, թե ինչպես է հռետորը լսարանին փորձում հասկացնել, որ պարզից էլ պարզ է, ակնհայտ է (clear-eyed), որ պատերազմն անխուսափելի է: Հարկ է նշել, որ clear-eyed բարդ բառն այստեղ գործածվել է փոխաբերական իմաստով և որոշիչ է դարձել, քանի որ առանձին է հանդես եկել: Դրանով նախագահն ուզում է ասել, որ կարծես «բաց ճակատով» պետք է ընդունել դառը իրականությունը: Ասելով **“Clear-eyed, we can understand that there will be war, and still strive for peace”** նախագահն ասես ի նկատի ունի «ներգրավվածություն պատերազմի մեջ» նշանակությունը հանուն աշխարհի փրկության: Հետևաբար, «պատերազմ» և «խաղաղություն» հասկացությունները ձեռք են բերում և արտահայտում են նույն իմաստը, քանի որ անորոշ է, թե աշխարհը կամ ԱՄՆ-ը, արտահայտված լինելով we անձնական դերանվան

միջոցով, պետք է պայքարի պատերազմի համար թե՞ խաղաղության: Նրանք ձեռք են բերում ներտեքստային իմաստային կապ և նույնականացվում են, քանի որ **peace** և **war** բառերը կարելի է փոխարինել մեկը մյուսով (“**we can understand that there will be peace, and still strive for war**”): **Can** եղանակավորող բայի և **we** անձնական դերանվան հոգնակի թվի անընդմեջ կրկնության միջոցով նախագահն ապահովում է ինքնագնահատականի հուզական երանգ՝ ցույց տալով իր և լսարանի անմիջական մասնակցությունը նկարագրվող իրականությանը: Ակնհայտ է, որ հենց Ամերիկայի անունից հանդես եկող նախագահն է պատրաստվում պատերազմ սկսել հանուն խաղաղության, այլ ոչ թե աշխարհը, քանի որ դա նրանց առաքելությունն է, նրանց պարտականությունը (**that must be our work here on Earth**):

Երկրորդ ենթագլխում («Պատերազմ» հասկացությամբ՝ որպես ամերիկյան արժեքների ձևավորման միջոց») վերլուծության է ենթարկվում ԱՄՆ-ի նախկին նախագահ Ջորջ Բուշ Կրտսերի՝ 2001թ. նոյեմբերի 10-ին Միավորված Ազգերի Գլխավոր Ասամբլեայում կայացած ելույթը, որով վերջինս կոչ արեց ողջ քաղաքակիրթ ազգերին միավորվելու և պատերազմելու միջազգային ահաբեկչության դեմ:

**We know that evil is real, but good will prevail against it. This is the teaching of many faiths, and in that assurance we gain strength for a long journey. It is our task – the task of this generation – to provide the response to aggression and terror. We have no other choice, because there is no other peace.**

Նախագահ Ջ. Բուշ Կրտսերի ելույթի վերոնշյալ հատվածը հատկանշական է նրանով, որ գրեթե ամբողջովին համապատասխանում է դասական «ամերիկյան անհատականության» գաղափարին, որը ձևավորում է արժեքների համընդհանուր համակարգ, և որի սկզբունքները Ամերիկայի պատմության ողջ ընթացքում ոչ միայն անփոփոխ են մնացել, այլև ձեռք են բերել նոր որակներ, այն է՝ աշխարհի առաջնորդ դառնալու ձգտումը, բոլոր պետություններին ստիպելը շարժվելու իրենց օրենքներով, պատմությանը մարտահրավեր նետելը, «չարի և բարու» միջև ընթացող հավերժական պայքարը, որոնք հանդես են գալիս որպես արտալեզվական գործոններ և խոսքին հաղորդում հավելյալ եղանակավորում:



We անձնական և our ստացական դերանունների կրկնությունը յուրաքանչյուր նախադասության մեջ խոսքին հաղորդում է հուզարտահայտչական երանգ, որով նախագահը հանդես է գալիս ոչ միայն ամերիկացիների, այլև ողջ քաղաքակիրթ աշխարհի (**civilized world**) անունից՝ բնականաբար ներգրավելով բոլոր ազգերին այդ գործընթացին և նրանց դարձնելով դրա մի մասնիկը:

Խոսելով չարի ու բարու մասին՝ նախագահը կոչ է անում պայքարել չարի (**evil**) դեմ: Հարկ է նշել, որ նա **long journey** արտահայտությունը գործածել է փոխաբերական իմաստով, քանի որ այն ոչ այնքան արտահայտում է բառարաններում հաստատված «երկար ճամփորդություն», որքան «երկարատև պատերազմ» իմաստը շնորհիվ այն համատեքստի, որտեղ հանդես է գալիս: Տվյալ համատեքստում **we gain strength for a long journey** արտահայտությունը ցույց է տալիս, թե ինչպես են ամերիկացիները ուժ հավաքում և պատրաստվում պատերազմի: **War**-ը փոխարինելով **journey** գոյականով՝ նախագահը կարծես ընդգծում է պատերազմի երկարատև բնույթը: Նա **strength** գոյականը գործածում է ոչ թե իր առաջնային նշանակությամբ, այլ բառարաններում առկա 4-րդ իմաստով՝ «ռազմական ուժերի քանակ, թիվ», այսինքն՝ հարկավոր է ձեռք բերել բավարար քանակի ռազմական ուժ երկարատև պատերազմ սկսելու համար ընդդեմ չարի, ահաբեկչության:

Պետք է նշել, որ այս հատվածը վերցված է նախագահի ելույթի վերջին մասից, որտեղ **strength** գոյականն իր գործաբանական նշանակությամբ հանդիսանում է ճանաչողական համատեքստի այն օղակը, որը լսարանին ու ամբողջ աշխարհին հաղորդում է վերջինիս երկրի ազգային ոգին՝ ստիպելով ընդունել այն: Այս համատեքստում **strength** գոյականն արտահայտում է բառարանում հաստատված գրեթե բոլոր նշանակությունները՝ «ուժ», «դիմադրություն», «ամրություն», «ռազմական ուժ»: Նախագահը հենց **strength** բառի միջոցով է ցույց տալիս ԱՄՆ-ի ուժեղ և ամուր լինելը, որը պատրաստ է ցանկացած դիմադրության և հարկ եղած դեպքում՝ ծանր ու երկարատև հակահարվածի (**long journey**):

«Ամերիկյան անհատականությունն» իր վառ դրսևորումն է հատկապես ստանում այն ժամանակ, երբ հռետորը լսարանին գրեթե հնարավորություն չի տալիս որոշում կայացնելու, ընտրություն կատարելու համար, քանի որ

ընտրության բացակայությունը հիմնավորված է խաղաղությամբ՝ **we have no other choice, because there is no other peace**: Այնուհետև **it is our task – the task of this generation – to provide the response to aggression and terror** արտահայտության մեջ **task** գոյականի կրկնության շնորհիվ՝ **our task – the task of this generation**, հռետորը փորձում է լսարանին փոխանցել այն միտքը, որ պատմության կողմից նետված մարտահրավերին պետք է պատասխան տա հենց ինքը՝ ներկա սերունդը, որը զրկված է ընտրության իրավունքից: Սրանով Ջ. Բուշը առաջ է քաշում ներկա սերնդի գաղափարը (**this generation**) և զգուշացնում, որ հենց վերջինս պետք է պայքարի սպառնալիքի, ահաբեկչության և պատերազմի դեմ, քանի որ եթե դա նրանք չանեն, ապա նրանց երեխաները կլինեն անպաշտպան ու անապահով: Հարկ է նշել, որ նախագահն այս գաղափարն արտասանում է դադարով, մինչդեռ գրավոր խոսքում այն արտահայտվում է զօհկներով՝ դրանով մատնանշելով, թե կոնկրետ ներկա սերունդը պետք է լուծի տվյալ **խնդիրը – task**:

Այսպիսով, նախագահների ելույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ Բ. Օբամայի կողմից գործածված «**violent conflict**», «**use of force**», «**force may sometimes be necessary**», «**war is sometimes necessary**» և “**just war**” լեզվական միավորները, ինչպես նաև **43** անգամ **war** և **32** անգամ **peace** գոյականների գործածությունը, իսկ Ջ. Բուշ Կրտսերի կողմից **15** անգամ **war** ու **18** անգամ **peace** գոյականների, ինչպես նաև “**just peace**” լեզվական միավորի գործածությունը հիմք են տալիս ենթադրելու, որ հասցեատերը, Ջ. Բուշ Կրտսերի ելույթում ավելի շատ լսելով **peace** – խաղաղություն բառը, սկսում է հավատալ, որ Իրաքի դեմ պատերազմն ավարտվելուց հետո անպայման կհաստատվի երկարատև խաղաղություն, իսկ Բ. Օբամայի ելույթը, տանելով թվացյալ խաղաղության, իրականում ստեղծում է հակառակ ներգործություն, այն է՝ մարդկանց տանում է մոլորության ու պատերազմի, ինչի արդյունքում կարող է ստեղծվել վախի զգացում:

Երրորդ գլխում («Վախ» հասկացության առկայացման միջոցները ժամանակակից ամերիկյան մամուլում («պատերազմ» և «խաղաղություն» երկույթների հարաբերակցությամբ)) քննության են առնվում ԱՄՆ-ի նախագահներ Բ. Օբամայի և Ջ. Բուշ Կրտսերի վերոնշյալ ելույթների՝ մամուլում լույս տեսած հոդվածները, որտեղ ցույց է տրվում, թե ինչպես է մեկնաբանողը կամ հոդվածագիրը անուղղակիորեն կամ ուղղակիորեն ուղղորդում լսարանին

կոնկրետ գործողությունների: Մեկնաբանունը, լինելով նպատակաուղղված ճանաչողական գործունեություն, անմիջականորեն կապված է մեկնաբանողի ներքին և արտաքին նպատակների հետադարձ կապով, այսինքն՝ մեկնաբանողի ներաշխարհը և աշխարհայացքը անպայման արտացոլվում են հոդվածի շրջանակներում: Բնականաբար, այդ ամենն էլ ուղղակիորեն փոխանցվում է ընթերցողին՝ ձևավորելով վերջինիս մոտ անհատական կարծիք և գնահատական հոդվածում արծարծված նյութի հանդեպ: Հետևաբար, շատ մեծ է հոդվածի հեղինակի դերը, քանի որ հենց նրա շնորհիվ է ընթերցողը ճանաչում աշխարհը և պատկերացում կազմում տվյալ իրադարձության մասին: Հոդվածագիրն այն օղակն է, որը կապում է քաղաքական գործչին և լայն զանգվածներին, այսինքն՝ նա մեկնաբանում է հռետորի ճառերը, ինչպես թարգմանիչն է թարգմանում քաղաքական գործչի խոսքերը:

Ինչպես հայտնի է, քաղաքական ճառի ցանկացած հեղինակ փորձում է նկարագրել իր աշխարհի ճանաչողական պատկերը: Այդ ճանաչողական պատկերում անպայման կան դատողություններ, թե ինչպիսին է տվյալ հասարակությունը կամ ինչպիսին պետք է այն լինի: Հետաքրքիրն այս պարագայում այն է, որ հոդվածի հեղինակը, ներկայացնելով հռետորի սուբյեկտիվ ճանաչողական աշխարհի պատկերը, արտահայտում է նաև իր անձնական կարծիքն ու վերլուծությունը: Ահա այստեղ է, որ չնայած այդ փաստին, թվում է, թե ոչ ոք ճնշում չի գործադրում հասցեատիրոջ կարծիքի ձևավորման մեջ: Այնուամենայնիվ, վերջինիս վրա անուղղակիորեն մեծ ազդեցություն են թողնում երկու կարևոր գործոններ՝ հռետորի համոզման գործընթացը և հոդվածագրի՝ տվյալ նյութի վերլուծման ու մատուցման ձևը: Ակնհայտ է, որ հասցեատիրոջ ձևավորված կարծիքն անմիջականորեն կապված է վերոնշյալ երկու գործոնների հետ:

**The New York Times** օրաթերթում տպագրված հոդվածում կարելի է տեսնել, թե ինչպես է լրագրողը հավաստիացնում բոլորին, որ Ջ. Բուշ Կրտսերի կողմից առաջ քաշվող հակամարտությունը տարբերվելու է Վիետնամի պատերազմից՝

**“We assure ourselves that this conflict is different from the one we carried out in Vietnam. Yet Vietnam’s ghosts are still here and they steal away the old certainty that the end will inevitably be triumphant.” (The New York Times, October 12, 2001).**

Նախադասության սկզբում գործածելով **we** անձնական դերանվան հոգնակի թիվը՝ լրագրողը ստեղծում է միասնականության դաշտ՝ ցույց տալով, որ ինքը հանդես է գալիս բոլոր ամերիկացիների կողմից և ցանկանում է, որ ընթերցողը վստահի իրեն: Ընթերցողը սկսում է տեսնել ու ընդունել իրականությունը լրագրողի աչքերով, քանի որ վերջինս հանդես է գալիս ոչ միայն անձամբ իր, այլև բոլոր ամերիկացիների անունից, այսինքն՝ ընթերցողին ականայից մատուցվում է մի «ճշմարտություն», որի հեղինակը ինքը չէ, այլ լրագրողը՝ մեկնաբանելով նախագահի ելույթը: Բնական է, որ հոդվածագիրը իր հոդվածով ուղղորդում է իր ընթերցողին՝ վստահեցնելով, որ այս հակամարտությունը հանգեցնելու է խաղաղության:

Իր խոսքն ավելի պատկերավոր և հասկանալի դարձնելու նպատակով լրագրողը Վիետնամի պատերազմի հիշողություններն անվանում է ուրվականներ – **ghosts**: Հատկանշական է, որ **ghost** գոյականն այստեղ օգտագործվել է փոխաբերական իմաստով, քանի որ լրագրողը փորձում է իր ընթերցողին ցույց տալ, որ Վիետնամի հիշողությունները ուրվականների և գիշերային մղձավանջի պես իրենց հանգիստ չեն թողնում և հետևում են իրենց ամեն քայլափոխի: Ինչ վերաբերում է **here** դերանվանը, ապա պետք է նշել, որ շնորհիվ **ghost** գոյականի և **still** մակբայի այն այս համատեքստում կորցրել է իր առաջնային իմաստը՝ «այստեղ»՝ նպատակ հետապնդելով ցույց տալ, որ Վիետնամի պատերազմի վատ հիշողությունները դեռևս թարմ են ու բույն են դրել բոլոր ամերիկացիների սրտերում: Լրագրողը փաստաբովանդակային-հայեցակարգային տեղեկատվության միջոցով մի կողմից վերաիմաստավորում է հասարակության մեջ տեղի ունեցող վերոնշյալ երևույթները, իսկ մյուս կողմից ներկայացնում է իր անհատական-գնահատողական եղանակավորումը՝ մղելով ընթերցողին կոնկրետ գործողության:

Ինչ վերաբերվում է **certainty** գոյականին, պետք է նշել, որ այն շնորհիվ **old** ածականի կորցրել է իր ուղիղ բառարանային իմաստը՝ «անտարակուսելի փաստ, վստահություն» և այս համատեքստում ձեռք է բերել փոխաբերական իմաստ՝ «կարծրատիպ, հոգեկերտվածք, մտածելակերպ (մենթալիտետ)»: Լրագրողը ցանկանում է բոլորին ներկայացնել ամերիկյան հոգեկերտվածքը՝ լինել ուժեղ, հպարտ և հաղթող, որը ցանկացած իրավիճակից հաղթական է դուրս գալիս: **End** գոյականը, **old** ածականի և **certainty** գոյականի հետ հանդես գալով

մինչև նույն համատեքստում, նույնպես կորցրել է իր առաջնային իմաստը՝ «վերջ», և օգտագործվել է բառարաններում հաստատված երրորդ և չորրորդ իմաստներով՝ «արդյունք, հետևանք, նպատակ»: Լրագրողն իր հոդվածով ոչ թե իր ընթերցողին դրդում է հուսահատության, այլ ճիշտ հակառակը՝ վերջինիս քաջալերում է, ոգեշնչում և ցույց տալիս, որ ստեղծված հուսահատ իրավիճակից դուրս գալու միակ ճանապարհը պատերազմելն է, որպեսզի իսպառ աշխարհի երեսից վերանա ահաբեկչությունը, իսկ դրանից հետո ի վերջո կհաստատվի այդքան ցանկալի խաղաղությունը: Կարելի է արձանագրել, որ **end** գոյականը այս համատեքստում գործածվել է «նպատակ, արդյունք» իմաստով, քանի որ լրագրողը, փորձելով քաջալերել իր ընթերցողին, ձգտում է վերականգնել երբեմնի ամերիկյան երազանքն ու նպատակը՝ լինել իշխող և հաղթող:

Լինելով հնուտ լրագրող՝ վերջինս ներկայացնում է ամերիկյան պատմության տիպիկ օրինակ և մի կողմից ցույց է տալիս իր՝ ամերիկյան հոգեկերտվածքի կրող լինելը, իսկ մյուս կողմից **we assure ourselves** արտահայտության միջոցով համոզում է ընթերցողին համաձայնվել նախագահի ռազմավարության հետ, հավատալ, որ ահաբեկչության դեմ մղվելիք ռազմական գործողությունները անկասկած հանգեցնելու են խաղաղության, քանի որ նախագահ Ջ. Բուշ Կրտսերի քայլերը ճշմարիտ են և բխում են ամերիկացիների շահերից:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում **BBC North America** օրաթերթի խմբագրի հոդվածը, որտեղ վերջինս հստակորեն ցույց է տալիս, որ Բ. Օբամային շնորհվեց նորբլյան խաղաղության մրցանակ միայն նրա համար, որ ինքն ընդամենը հակաբուլշական էր (*anti-Bush*)՝

**“The President of war and peace appears to have pulled off a difficult balancing act, by refusing to bask in the glow of merely being the ‘anti-Bush’” (Mark Mardell, BBC North America editor, December 16, 2009).**

Այս հոդվածի առաջին իսկ բառակապակցությունը՝ **the President of war and peace**, ստեղծում է խոր հուզարտահայտչականություն, քանի որ լրագրողը հենց սկզբից մատնանշում է այն փաստը, որ Բ. Օբաման պատերազմի և խաղաղության նախագահ է, և չպետք է արժանանա մնացած բարձր մրցանակի: Այս աննշան, բայց մինչև նույն ժամանակ կարևոր տեղեկատվությամբ լրագրողը ներկայացնում է իր՝ հեղինակային աշխարհի ճանաչողական պատկերը, որն

անկասկած մեծ դերակատարում է ունենում ընթերցողի աշխարհընկալման գործընթացում: Այդ արտահայտությունը, որն իր մեջ պարունակում է տեղեկատվության մեծ մասնաբաժին, օգնում է լրագրողին շարադրելու իր հոդվածը, իսկ ընթերցողին՝ ընկալելու նրա ներտեքստային և արտատեքստային իմաստը: Նախագահին վերագրելով երկու տարբեր հակադիր հասկացույթներ (**war and peace**)՝ լրագրողը ցույց է տալիս իր հոդվածի ճանաչողական արժեքը, որը մի կողմից արտահայտում է ամերիկացու իսկությունը, իսկ մյուս կողմից ձևավորում է ճանաչողական հենք միջմշակութային համատեքստում, քանի որ ԱՄՆ-ը, լինելով աշխարհի հզորագույն պետություններից մեկը, անմիջականորեն ազդում է այլ պետությունների վրա:

Հարկ է նշել, որ հոդվածագիրը միտումնավոր է ընդգծում համամարդկային երկու հակադիր հասկացույթների՝ պատերազմի և խաղաղության փաստը, քանի որ Բ. Օբաման ստանում է նորբեյյան խաղաղության մրցանակ այն ժամանակ, երբ դրանից մի քանի օր առաջ 30000 ամերիկյան զինվոր էր ուղարկել Աֆղանստան պատերազմի համար: Այդ է պատճառը, որ ընթերցողը, կարդալով այս հոդվածը, հայտնվում է խառնաշփոթի մեջ, քանի որ չի հասկանում, թե ինչպես կարող են նախագահին շնորհել խաղաղության մրցանակ Աֆղանստան զորք ուղարկելուց հետո: Արդյոք նրա համա՞ր, որ նա ջանում է, ձգտում խաղաղություն հաստատել, սակայն միևնույն ժամանակ չի հրաժարվում նախկին նախագահի վարած քաղաքականությունից: Հարկ է նշել, որ **glow** գոյականը հոդվածի հեղինակը օգտագործել է բառարաններում հաստատված երկրորդ իմաստով՝ «շողք, փայլ»: Իսկ «փայլ» իմաստն էլ տվյալ համատեքստում ձեռք է բերել «փառք» փոխաբերական իմաստը՝ շնորհիվ **to bask** բայի: Լրագրողը ցանկանում է հատուկ ընդգծել, որ Բ. Օբամային խաղաղության մրցանակ են շնորհում հենց միայն նրա համար, որ նա ձգտում է վայելել «հակաբուշական» լինելու փառքը, քանի որ «բուշական» լինելու պարագայում ինքը պարզապես կզրկվեր նմանատիպ բարձր պարգևից:

**The Huffington Post**-ում տպագրված հոդվածում կարելի է հստակ տեսնել, թե ինչպես է լրագրողը ցույց տալիս նախագահի վճռականությունը պատերազմ սկսելու ուղղությամբ՝

“Barack Obama managed to confront the irony of receiving the award during wartime. The president delivered a robust defence of war "while acknowledging his own few accomplishments" (The Huffington Post, December 10, 2009).

Այս հոդվածի “The president delivered a robust defence of war” հատվածը կարող է մեծ ներգործություն ունենալ լսարանի վրա՝ նախապես որոշակի տրամադրություն հաղորդելով վերջինիս: Ընթերցողը, կարդալով հեղինակի այս միտքը, ակամայից մոլորվում է և չի հասկանում, թե ինչպես կարող է «պատերազմի ամուր պաշտպանություն» – «robust defence of war» իրականացնող մարդը ստանալ նոբելյան մրցանակ: Հարկ է նշել, որ այստեղ **robust** ածականը գործածվել է բառարաններում առկա երկրորդ իմաստով՝ «ամուր»: Դրանով հոդվածի հեղինակը ցույց է տալիս Բ. Օբամայի ամուր վճռականությունը պատերազմի պաշտպանության հարցում: Հոդվածագրի մեկնաբանությունը հենց այն հաղորդակցական մտադրությունն է, որը դառնում է այսպես կոչված «միջնորդ» կամ «կամուրջ» ընթերցողի և հռետորի միջև, և որի շնորհիվ ընթերցողը սկսում է ինքնուրույն դատողություններ անել և ցույց տալ իր վերաբերմունքը տվյալ իրադարձությանը: Բանն այն է, որ հոդվածի հեղինակը չի պարտադրում իր ընթերցողին ընդունելու իր տեսակետը, նա ընդամենը տեղեկացնում է և հաղորդում իր ներքին հույզերն ու կարծիքը:

Հարկ է նշել, որ “robust defence of war” - «պատերազմի ամուր պաշտպանություն» արտահայտությունը փոխաբերություն է, քանի որ դրա միջոցով լրագրողն ընթերցողի «աչքերը բաց է անում»՝ ցույց տալով, որ Բ. Օբաման ոչ թե խաղաղության, այլ պատերազմի կողմնակից է, քանի որ նա պաշտպանում է պատերազմի գաղափարը, այլ ոչ թե խաղաղության, ինչի համար նրան շնորհվել էր նոբելյան մրցանակ: Հետաքրքիրն այն է, որ լրագրողն իր սուբյեկտիվ գնահատողական եղանակավորման միջոցով ընթերցողի մոտ անուղղակիորեն ձևավորում է բացասական մոտեցում Բ. Օբամայի վարած քաղաքականության նկատմամբ: Նա դրանով ցույց է տալիս, որ թեև Բ. Օբամային շնորհվեց խաղաղության համաշխարհային մրցանակ, վերջինս բոլորովին խաղաղության ուղղությամբ դեռևս ոչ մի քայլ չի կատարել, և ինչպես նկատում է իր մեկնաբանության մեջ, նախագահը պատրաստ է իր երկիրը պաշտպանելու պատրվակով ամեն գնով պատերազմ սկսել: Հենց սա պատճառ է

դառնում, որ հասարակ մարդիկ սկսեն «վախենալ» և կանխազգալ, որ նախագահի վարած քաղաքականությունը հնարավոր է տանի պատերազմի:

**New York Daily News** թերթում տպագրված հոդվածն ուսումնասիրելիս կարելի է տեսնել, թե ինչ հնտությամբ է հոդվածագիրը ծաղրում նոբելյան հանձնաժողովին Ջ. Բուշից ոչնչով չտարբերվող նախագահին խաղաղության մրցանակ շնորհելու համար՝

**"They wounded two doves with one stone. It's not Obama's fault he attracts such absurd knee-jerk adulation from the world's elites, all for a series of compelling speeches and pledges to cooperate with the world community... Now, the prize is officially a late-night joke." (New York Daily News, December 10, 2009)**

Այս հոդվածի առաջին նախադասությունը հուզական մեծ ներգործություն է թողնում ընթերցողի վրա: Այն հագեցած է լրագրողի սուբյեկտիվ գնահատողական եղանակավորմամբ և ամբողջովին ընթերցողին ներկայացնում է նոբելյան հանձնաժողովի «սխալ» քաղաքականությունը: Պարբերության առաջին իսկ բառի միջոցով՝ **they** անձնական դերանվամբ, լրագրողը ընթերցողին մատնանշում է նոբելյան հանձնաժողովի անդամներին՝ չցանկանալով ներկայացնել նրանց որպես հավաքական գոյական (**the Committee**) և խոսքին հաղորդելով հեզնական երանգ: Լրագրողը գործածում է **they** դերանունը, որպեսզի ընթերցողին ցույց տա, որ Բ. Օբամային խաղաղության մրցանակ շնորհելու մեջ «մեղավոր» են հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ: Հենց նրանք են պատասխանատվություն կրում նախագահին մի մրցանակ շնորհելու մեջ, որին իր կարճաժամկետ նախագահության օրոք նա դեռ չէր արժանացել: Բացի դրանից, դեռ չկար որևէ ապացույց առ այն, որ Բ. Օբաման խաղաղության կողմնակից է:

Առաջին նախադասությունը հետաքրքրական է նաև նրանով, որ հոդվածագիրն օգտագործել է բոլորին հայտնի անգլերեն ասացվածքի՝ «**to kill two birds with one stone – մի զարկով երկու նապաստակ սպանել**» վերափոխված տարբերակը՝ «**to wound two doves with one stone – խոցել երկու աղավնու մի զարկով**»: Բնականաբար, հարց է առաջանում, թե ինչու է լրագրողը փոփոխության ենթարկել հայտնի ասացվածքը: Բանն այն է, որ **dove** - **աղավնի** թռչնի տեսակը խորհրդանշում է խաղաղություն, ինչպես օրինակ՝ **dove of peace – խաղաղության աղավնի**: Իսկ տվյալ համատեքստում Բ. Օբաման է



«խորհրդանշուն» խաղաղությունը: Հետևաբար լրագրողը, **bird** հավաքական գոյականի փոխարեն գործածելով **dove** թռչնի տեսակը, Բ. Օբամային համեմատում է «աղավնու» հետ: Ավելի մանրագնին ուսումնասիրելու դեպքում կարելի է ընդգծել, որ «**two doves**» բառակապակցությամբ լրագրողն ի նկատի ունի «պատերազմ» և «խաղաղություն» համամարդկային հասկացությունները, այսինքն՝ նախագահին խաղաղության մրցանակ շնորհելով՝ նոբելյան հանձնաժողովը լուծել է երկու կարևորագույն խնդիր. Բ. Օբամային պարտավորեցրել է առաջնորդել իր քաղաքականությունը միմիայն խաղաղության ճանապարհով և չհետևել Ջ. Բուշ Կրտսերի պատերազմական քաղաքական օրինակին:

Հաջորդ հատվածում ընթերցողը կրկին անգամ համոզվում է, որ նոբելյան հանձնաժողովի՝ Բ. Օբամային խաղաղության մրցանակ շնորհելը առնվազն «սխալ» քաղաքականության արդյունք է: Հետաքրքիրն այն է, որ լրագրողը նախագահին չի մեղադրում, այլ միայն հանձնաժողովին (**It's not Obama's fault he attracts such absurd knee-jerk adulation from the world's elites**), քանի որ կարծում է, որ գերող (**compelling**) ելույթներից և համաշխարհային համագործակցության խոստումներից (**pledge**) հետո լիովին հասկանալի է Բ. Օբամային խաղաղության մրցանակ շնորհելը: Հարկ է նշել, որ այս համատեքստում **compelling** ածականը ձեռք է բերել ավելի շատ «**համոզիչ-convincing**» բառիմաստը, քան «գերող, համակող» բառարանային բուն իմաստը: Լրագրողը փորձում է հասցեատիրոջը ցույց տալ, որ նախագահին մրցանակ շնորհելու միակ պատճառը նրա «համոզիչ» ելույթներն են, որոնք հմայել և գերել են հանձնաժողովի բոլոր անդամներին: Դա է թերևս միակ բացատրությունը, թե ինչու հոդվածագիրը **convincing** բառի փոխարեն գործածել է **compelling** ածականը: Պետք է նաև ընդգծել, որ **compelling** ածականը առաջացել է **compel** բայից, որը բառարանում ունի հետևյալ իմաստները՝ «ստիպել, հարկադրել»: Ահա այստեղ ակնհայտ է դառնում այն փաստը, որ **convincing** բառի փոխարեն **compelling** ածականի գործածությունն օգնում է ընթերցողին հասկանալ, որ Բ. Օբամայի ելույթները ոչ միայն համոզում են մարդկանց, այլև ստիպում են ընդունել նրա խոսքերը, անգամ եթե դրանք ճշմարիտ չեն, այսինքն՝ լրագրողը ընթերցողի «աչքերը բաց է անում»՝ հասկացնելով վերջինիս, որ նախագահի խոսքերը, համոզիչ լինելով հանդերձ, նաև հարկադրող են և գերող:

Իսկ ինչ վերաբերվում է **pledge** գոյականին, ապա պետք է շեշտել, որ այն օգտագործվել է բառարաններում հաստատված չորրորդ իմաստով՝ «հանդիսավոր խոստում, երդում, ուխտ»: Լրագրողը ցույց է տալիս, որ նախագահին մրցանակ են շնորհել մի խոստման համար, որն ընդամենը երաշխավորում է համաշխարհային համագործակցությունը, այսինքն՝ ընթերցողը նորից համոզվում է, որ տվյալ հանդիսավոր երդումը հնարավոր է չկատարվի, և հետագայում նախագահը միգուցե դիմի պատերազմական միջոցների իր սեփական նպատակներն իրագործելու համար: Յետաքրքիրն այն է, որ հողվածագիրը կարող էր օգտագործել **oath** գոյականը, որի առաջնային իմաստը հենց «հանդիսավոր երդումն» է, սակայն նա նպատակահարմար է գտել **pledge** բառը, քանի որ վերջինիս երկրորդ իմաստը «երաշխավորություն» է: Ահա այստեղ ակնհայտ է դառնում, որ **pledge** գոյականի գործածմամբ նախագահը կարծես երաշխավորում է և ստիպում միջազգային հանրությանը հավատալ, որ ինքը ոչ թե պատերազմի, այլ խաղաղության ջատագով է:

Յաջորդ նախադասությունը՝ “**the prize is officially a late-night joke**”, պարունակում է միաժամանակ երկու ոճական հնար՝ փոխաբերություն և հեզնանք: Փոխաբերություն է, որովհետև մրցանակը չի կարող «ուշ գիշերվա կատակ» լինել և հեզնանք է, քանի որ այն ամենից հետո ինչ լրագրողը ներկայացնում է ընթերցողին, իսկապես ծիծաղելի է և ծաղրական նախագահին խաղաղության մրցանակ շնորհելը, այսինքն՝ լրագրողը հեզնանքի միջոցով ցույց է տալիս, թե որքան անհեռատես է նորբեյյան հանձնաժողովի քաղաքականությունը: Յետաքրքիրն այն է, որ “**a late-night joke**” խոսքային միավորը կարելի է փոխակերպել և դրա փոխարեն օգտագործել “**a nightmare – մղձավանջ**” գոյականը, որը լիովին կարտահայտի լրագրողի միտքը: Սակայն, հասկանալով, որ **a nightmare – մղձավանջ** գոյականը կարող է բացասական հույզեր առաջացնել ընթերցողի մոտ, լրագրողը նպատահարմար է գտնում գործածել «**a late-night joke – ուշ գիշերվա կատակ**» խոսքային միավորը, որն ըստ էության չեզոք է, քանի որ **a joke – կատակ** գոյականը ենթադրում է դրական հույզեր: Ահա սրանով է պայմանավորված լրագրողի անհատական-գնահատողական տեսակետը տվյալ մրցանակի շուրջ: Նա ուղղորդում է իր ընթերցողին՝ ձգտելով զգուշացնել, որ այդ «մղձավանջը» շարունակական բնույթ

է կրելու, և դա ոչ միայն երաշխիք չի ստեղծում հետագա պատերազմներից խուսափելու համար, այլև նպաստում է դրա իրագործմանը:

Այսպիսով, շնորհիվ մի շարք լեզվական արտահայտչամիջոցների (**robust defence of war; the prize is officially a late-night joke; the President of war and peace**) լրագրողներն իրենց հոդվածներում ընդգծում են, թե ինչպես է նոբելյան մրցանակ ստացած նախագահ Բ. Օբաման հենց իրենց կատարած վերլուծությունների արդյունքում դադարում լինել խաղաղության ջատագով, քանի որ իրականում հռետորի խոսքերի ներքո թաքնված է «պատերազմը», այլ ոչ թե խաղաղությունը, որն էլ վախ է առաջացնում ընթերցողների մոտ: Լրագրողները ստեղծում են այնպիսի ճանաչողական հարթություն, որտեղից ակնհայտ է դառնում, որ Բ. Օբամայի վարած քաղաքականության հետագա ընթացքը մշուշոտ է, անորոշ և հարկավոր է զգուշանալ: Լրագրողների կողմից կատարված քաղաքական հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ ամերիկյան քաղաքական խոսույթը կառուցված է ազգային գաղափարական արժեքների հիման վրա, որը սփռվում է նաև ողջ մարդկության վրա: Ջանազան լեզվական միջոցների (**robust defence of war; the president of war and peace; the prize is officially a late-night joke; war aim**) շնորհիվ ընթերցողին մատուցվում է լրագրողի անհատական-գնահատողական տեսակետը տվյալ համաշխարհային խնդիրների շուրջ, որի օգնությամբ էլ ձևավորվում է «վախ» հասկացույթը:

**Եզրակացության** մեջ ամփոփվում են հետազոտության հիմնական արդյունքները.

- Լեզվական միավորների ընտրությունը պայմանավորված է հեղինակի այս կամ այն հաղորդակցական նպատակով: Լսարանին հավատ և վստահություն ներշնչելու և նրա վրա հուզականորեն ու հոգեբանորեն ներգործություն ունենալու նպատակով հեղինակն իր խոսքը կառուցում է տրամաբանորեն հիմնավորված ու փաստարկված՝ շատ անգամ մեջբերումներ անելով հեղինակություն վայելող հռետորների մտքերից:
- Քաղաքական ելույթները և դրանց մեկնաբանությունները մամուլում իրականացնում են համոզման և լսարանի վրա ներգործություն ունենալու յուրօրինակ գործառույթ, որի արդյունքում «պատերազմ» և «խաղաղություն» հասկացույթները հանդես են գալիս միևնույն

հարթության վրա՝ ձևավորելով ամերիկյան քաղաքական խոսույթի և քաղաքական հաղորդակցման ամբողջական հասկացական դաշտը:

- «Խաղաղություն» հասկացույթն առկայանում է փոխաբերությունների, աստիճանավորումների, առաջահայման կարգի և շրջուն շարադասության միջոցով:
- «Պատերազմ» հասկացույթն առկայանում է մակդիրների, փոխաբերությունների, հակադրությունների, բաղաձայնությունների և հետահայման կարգի շնորհիվ:
- «Վախ» հասկացույթը վեր է հանվում մամուլի հոդվածների մեկնաբանության արդյունքում: Վերջինս առկայացվում է հեղինակի սուբյեկտիվ-գնահատողական եղանակավորման միջոցով, որը ձևավորվում է փոխաբերության, փոխանունության, մակդրի, հեզնանքի, հարակրկնության ոճական հնարների, ներկա անկատար, ներկա շարունակական, ներկա վաղակատար ժամանակաձևերի շնորհիվ: Ստեղծված ճանաչողական համատեքստում ընթերցողն ականայից սկսում է գիտակցել, որ Բ. Օբաման խաղաղության ջատագով չէ, և հասարակ ամերիկացին մոլորվում է վերջինիս վարած քաղաքականությունից:
- Ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ Բ. Օբաման «արդարացում» է պատերազմը (**a just war**), իսկ Ջ. Բուշ Կրտսերը՝ խաղաղությունը (**a just peace**): Իսկ մամուլի հոդվածների ոճաբանական-գործաբանական վերլուծության արդյունքում ավելի է շեշտվում այն փաստը, որ Բ. Օբաման ամենևին էլ խաղաղության ջատագով չէ, քանի որ նրա խոսքերի ներքո թաքնված է «պատերազմը», այլ ոչ թե «խաղաղությունը»:
- Մամուլի հոդվածների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ վերոնշյալ լեզվական միջոցների շնորհիվ ընթերցողին մատուցվում է լրագրողի անհատական-գնահատողական տեսակետը տվյալ համաշխարհային խնդիրների շուրջ, և հենց դրա շնորհիվ էլ անուղղակիորեն ձևավորվում է ընթերցողի սեփական կարծիքը՝

վերջինիս մոտ առաջացնելով վախի զգացում ոչ թե Ջ. Բուշ Կրտսերի, այլ Բ. Օբամայի վարած քաղաքականության նկատմամբ:

- Լսարանի վրա մեծ ներգործություն են ունենում նաև մի շարք արտալեզվական միջոցներ, որոնց շնորհիվ ձևավորվում է շարքային քաղաքացիների աշխարհընկալումը: Ամերիկյան քաղաքական խոսույթը կառուցված է ազգային գաղափարական արժեքների հիման վրա, որոնք սփռվում են նաև ողջ մարդկության վրա՝ լինելով համընդհանուր խնդիր: Ընդհանրության գաղափարը արտահայտվել է we – մենք անձնական դերանվան բազմակի գործածությամբ, որի օգնությամբ նախագահներն ամբողջ աշխարհին հիշեցնում են, որ ԱՄՆ-ն ուժեղ, հզոր և իշխող պետություն է, և իրենց՝ որպես այդ երկրի նախագահների քայլերը արդարացված են ու ճշմարիտ: Դա է պատճառը, որ Բ. Օբաման, Ջ. Բուշ Կրտսերը և ամերիկյան լրագրողները հանդես են գալիս ամերիկացիների ու ողջ աշխարհի մարդկության անունից՝ ստեղծելով քաղաքական շահերի ամբողջական ու համընդհանուր կապ:
- «Մենք-we» անձնական դերանունը երկու նախագահների ելույթներում կերտում է ժողովրդի՝ ամերիկացու ընդհանուր կերպարը, որով հռետորը իրեն և իր ազգի ներկայացուցիչներին դնում է միևնույն ճանաչողական հարթության վրա: Մամուլում «մենք»-ը հնարավորություն է տալիս լրագրողին հանդես գալու նաև ընթերցողի անունից, որով հողվածի հեղինակը, մեկնաբանելով քաղաքական գործչի ելույթը, հանդես է գալիս որպես հասարակության շարքային քաղաքացի, ինչպիսին ընթերցողն է: Բնականաբար, նմանատիպ պահվածքն ավելի մեծ ներգործություն է ունենում ընթերցողի վրա և ավելի արդյունավետ է, քան քաղաքական գործչի ելույթը, ինչն էլ հանդիսանում է բավարար պերսուազիվ հաղորդակցում:
- Չետագոտության արդյունքում ձևավորվում են այնպիսի արտալեզվական գործոններ, ինչպիսիք են՝
  - «ամերիկացու իսկությունը»,

- «ամերիկացու առաքելական դերը աշխարհում»,
- «ուրիշների փոխարեն որոշումներ կայացնելու իրավունք»:

Գրականության ցանկում ներկայացված են այն գրքերի, հոդվածների, գիտական աշխատությունների տվյալները, որոնք օգտագործվել են սույն հետազոտության ուսումնասիրության համար:

Հավելվածում ներկայացված են Բ. Օբամայի “Nobel Peace Prize Acceptance” և Ջ. Բուշ Կրտսերի “To United Nations General Assembly” ելույթները:

\* \* \*

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. «Խաղաղություն» և «Պատերազմ» հասկացությունների հարաբերակցությունը (Բ. Օբամայի ելույթի հիման վրա) // Օտար լեզուները Հայաստանում, N3, Երևան, Կրթության ազգային ինստիտուտ, 2012, էջ 40-47:
2. Կրկնությունը և փոխանունությունը՝ որպես «պատերազմ» հասկացության առկայացման միջոց Ջ. Բուշ Կրտսերի՝ Միավորված Ազգերի Գլխավոր Ասամբլեայում կայացած ելույթում // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N13, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 89-96:
3. «Վախ» հասկացության առկայացման միջոցները ժամանակակից ամերիկյան մամուլում (Ջ. Բուշ Կրտսերի և Բ. Օբամայի ելույթների հիման վրա) // Կանթեղ, N2 (55), Երևան, «Ասողիկ» հրատ., 2013, էջ 94-100:

## МХИТАРЯН ГЕВОРГ МХИТАРОВИЧ

### СРЕДСТВА АКТУАЛИЗАЦИИ КОНЦЕПТОВ “ВОЙНА”, “МИР” И “СТРАХ” В СОВРЕМЕННОЙ АМЕРИКАНСКОЙ ПРЕССЕ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук  
по специальности 10.02.07 “Германские языки”.

Защита состоится 15-го ноября 2013г. в 14:30 на заседании  
специализированного совета 009 ВАК РА, действующего в Ереванском  
государственном университете (Ереван, Алека Манукяна 1)

#### РЕЗЮМЕ

Диссертация посвящена исследованию средств актуализации концептов “война”, “мир” в выступлениях президентов США Б. Обамы и Дж. Буша Младшего и концепта “страх” в современной американской прессе.

**Актуальность** исследования определяется необходимостью разностороннего изучения когнитивных и прагматических особенностей политической коммуникации в современном обществе, а также англоязычного политического дискурса и медиадискурса.

**Целью** настоящей работы является изучение когнитивных и прагматических особенностей американского политического дискурса на основе политических речей и статей, опубликованных в прессе, благодаря которым складывается концептуальная картина мира адресата.

**Новизна** исследования заключается в том, что впервые предпринимается попытка проанализировать лингвокультурные ценности американской политической коммуникации и формирование коммуникативного и информационного намерения автора, персуазии, речевой манипуляции, формирования “субъективного” отношения адресата к “объективной” информации оратора и журналиста, как посредника между оратором и адресатом.

**Теоретическая значимость** диссертации заключается в том, что она вносит определенный вклад в изучение политического дискурса и интерпретацию его

лингвокультурных особенностей, а также развитие концептологии в сфере обогащения проблем когнитивной лингвистики и прагматической стилистики.

**Практическое значение** диссертации определяется тем, что результаты исследования могут быть использованы при разработке специальных курсов и лекций по лингвостилистике, когнитивной лингвистике, дискурс анализа.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложения.

**Во введении** обосновываются выбор темы, ее новизна и актуальность, определяется объект исследования, а также цель, задачи и методы, теоретическая и практическая значимость работы.

**В первой главе** рассматриваются понятия текст и дискурс, определяются политический дискурс, политическая коммуникация, речевые акты и СМИ, а также формирование когнитивной картины мира с точки зрения политической коммуникации.

**Во второй главе** проводится лингвопрагматический анализ политических речей президентов США Б. Обамы и Дж. Буша Младшего. С помощью анализа лингвистических и нелингвистических средств выявляются концепты “война” и “мир”.

**В третьей главе** анализируются статьи печатной прессы, посвященной вышеуказанным речам двух президентов США, и в результате когнитивно-прагматического изучения выявляется концепт “страх”.

**В заключении** представлены основные результаты проведенного исследования.

**В приложении** представлены речи Б. Обамы “Nobel Peace Prize Acceptance” и Дж. Буш Младшего “To United Nations General Assembly”.



## MKHITARYAN GEVORG

### MEANS OF ACTUALIZATION OF CONCEPTS “WAR”, “PEACE” AND “FEAR” IN MODERN AMERICAN PRESS

#### Summary

The research is the study of actual means of concepts “war”, “peace” and “fear” in modern American press.

The research is **aimed** at defining the cognitive and pragmatic peculiarities of American political discourse based on political speeches and press articles, as a result of which the addressee’s cognitive picture of world is formed.

The study is considered **topical** as at the development of contemporary linguistics the investigation of cognitive and pragmatic peculiarities of political communication, political discourse and the interpretation of newspaper articles are very essential.

The **novelty** of the research is determined by the analysis of the linguistic-cultural values of American political communication and the development of the author’s communicative and informative intention, persuasion, speech manipulation and the addressee’s own opinion via the orator’s and press reporter’s “objective” information. It opens new perspectives in the fields of cognitive linguistics, conceptual and discourse analysis.

The research comprises an introduction, three chapters, a conclusion, a bibliography and an appendix.

**The Introduction** defines the subject and the main objectives of the research. It presents the topical issues and novelty, the theoretical and practical value and the structure of the research.

**Chapter One** presents different approaches to the linguistic difference of “text” and “discourse”, definition of political communication, political discourse, speech acts and mass media information as a subject of linguistic analysis as well as the development of American-cultural based cognitive world picture.

**Chapter Two** analyses U.S. presidents B. Obama's and G. W. Bush's political speeches and elaborates upon the concepts “war” and “peace” via thorough examination of linguistic and non-linguistic means of their actualization.

**Chapter Three** examines the newspaper articles dedicated to the speeches of the two U.S. presidents. As a result of cognitive-pragmatic investigation the concept “fear” is revealed.

**The Conclusion** presents the main outcomes of the research.

**The Appendix** includes B. Obama's “Nobel Peace Prize Acceptance” and G. W. Bush's “To United Nations General Assembly” speeches.